ՏՐԴԱՏ

Ի՛նչ կ'երազեմ, ո՛ւր եմ, կ'երազէ՞ի...

ԱՇԽԷՆ

Պատմէ իշխանուհիս, պատմէ՛։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Տրդատ մտիկ ըրէ, նոր յայտնութիւն, նոր Աստուածն ինծի հետ խօսեցաւ։

ՏՐԴԱՏ

Խաչուած Աստուա՞ծը...

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Նոր Աստուածը, աստուածներու Աստուածն է, ճշմարիտը, անսկիզբը, և անվերջը, հզօր քան ամէն աստուածներն յունական. այն Աստուածն է որ Հռիփսիմէն մեզի քարոզած է։ Հինգ անգամ երկնքէն սուրհանդակ մը եկաւ ինծի. անշնորհք ու լոյս հագած էր, ու ըսաւ ինծի. գնացէք գտէք Գրիգորը, խոր վիրապէն հանեցէք, թէև անցած են երեք հինգական տարիներ, սակայն այն ողջ մնացեր և կը սպասէ ձեզի փրկութեան աւետարանը քարոզելու։

ՏՐԴԱՏ

Գրիգոր ո՞ղջ, վիշապներու ճիրաններէն ազատա՛ծ։ Ո՛հ ես կ'երազեմ...

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Արքայ եղբայր, ահա՛ ինքն է որ կու գայ. Օտա Նախարարը գայն գուբէն հաներ է. ամբողջ հայութիւնը դարձի եկած է. երկնային է հրաշքը. Հայաստան քրիստոնեայ է այլեւ։

ԱՐՋԱՆ

Առանձին։

Ուրեմն ես երթամ թագչիմ անոր գուբին մէջ։ Ով աստուածներ, մոռցաք մեր զոհերը, մեր խունկերը, մեր պաշտամունքը։

Կը մեկնի, կը հասնի Գրիգոր, Օտա Նախարարը հետն է, ասոնց կ'ընկերանայ նախարարներու խումբը։

ԱՇԽԷՆ

Երկինք, ահա՛ նոյն ինքն Գրիգոր։

ԳՐԻԳՈՐ

Տրդատին գլխուն վրայ ձեռքը դնելով, պահ մը լուռ կ'աղօթէ, և կը խօսի։

Փառք հրաշագործ խաչին, ազատեցայ գազաններու ատամներէն։ Տրդատ հաւատա՛ Գողգոթայի վրայ ողջակէզ անմահ նահատակ փրկչին։ Երկնային շնորհքն է որ սուրբ Հռիփսիմեանց բարեխօսութեամբ, արդ կը թափի քու և քու կառավարած ժողովուրդիդ վրայ. և քու օրովդ հայութեան անջնջելիութեան կնիքը կը դրոշմուի սուրբ խաչով։ Աստուածային կնիքն և դրոշմը, անսասան պիտի պահէ հիմերը Հայաստան աշխարհիս...

Տրդատ կը համբուրէ Գրիգորին խաչը, ամէնքը կ'աղօթեն բազկատարած, հայրապետը կ'օրհնէ.

ՎԱՐԱԳՈՅՐ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ՅՈՒՍԱԲԵՐ

Գահիրէի մէջ երկու տարիէ ի վեր լոյս կը տեսնէ չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։ Թերթին արտօնատէրն է Ա. Լալայեանց։ Գլխաւոր խմբագիրն է Հ. Ամիրեան։ Կ'աշխատակցին Կիպրոսի Նիկոսիայէն՝ Տօքթ. Ռ. Թագւորեան. Բարիզէն Տօքթ. Լևոն Համբարձումեան։ Յօդուածներ կը գրեն Հ. Երամեան, Վ. Գէորգեան, – Մ.Խ., – Արսէն Տիրան, – Ս. Փափազեան և այլք։ Ստէպ Հորիզոնէն և այլ դաշնակցական թերթերէ արտատպութիւններ ի լոյս կու գան հոն։
Արտասահմանի համար տարեկան բաժնեգինն է ֆր. 20։ Դիմել՝

Rédaction du journal Arm. « HOUSSAPER »

B. P. 868 LE CAIRE (Egypte)

digitised by A.R.A.R.@